

Քեանց ասող էրկինք ասկեար կը ժողուի.

Թուղթ կը գրը, ճամբխի վար Դաւթըն.

— «Իս էկայ, մի կուի Մշու գաշտ տըլնը»:

326. Թուղթ կը բիրին, կտան Դաւթըն ձեռ.

Դաւիթ թիւղթ կը վերցի կտայ Խանտիւթըն.

Խանտիւթ խաթիւն է, Դաւթըն կըսի.

— Էդա էրկու թիւղթ քիւ վերայ էրի.

Մէկ յառէջ, մէկ մկայ:

Իս գրի. «Դիւ էրկու թագեաւուր գէք, չըք կէրի Դաւթը
վերայ:

Բալքու թագեաւուր վախենայ, չգեայ կուի.

Մկայ ասկեար առիւր իկիւր է քեօ վերայ կուի.

Մշու գաշտ տըլնը կուի:

327. Դաւիթ կըսի. — Դիւ վրէ՞ ըծը շիւտ չըսէր,

Իս էրթէր, չթուղնէր Մշու գաշտ գէք:

— Իս չըր գտի տը գէն, թիւղթ էկաւ. իս քի խապար տուը:

— Դաւիթ, էսաց, կուգիս իսն էլ գեամ:

— Հա՛, էսաց, ասկեար ըծը թերի էրաց, դոր մնաց քի.

Դիւ տը գեաս, ի՛նչ էնիս.

Էն քեանիմ ասկեար իս չը՛մ կէրի կուտուը:

328. Էլ Դաւիթ չը կանգնաւ.

Ըլաւ յիւր հեօղ էրաց, կուը շուրիւր խագեաւ,

Ձին քեշից դիւս, զին դրից վերայ, խիծաւ.

էսաց. — Խանտիւթ խաթիւն, մնացի բարեով:

Ձընիմ, չիմանամ իմ յետիւ գեաս,

Դիւ իմ յետիւ գեաս, իմ կնիկ չիս.

Աստուած օղորմած է, մի վախենայ:

329. Դաւիթ ձին քշից տէրթէր,

Ապա Դաւիթ գտիր, Խանտիւթ խաթունին տղայ տըլնը.

էսաց. — Խանտիւթ խաթիւն,

Վուր ըծը տղայ ըլաւ, անուն դնիս Մհեր.

Իմ պապիէ անուն գետըն չմնայ:

330. Դաւիթ ձին քշից, գնաց.

Գնաց Մշու գաշտ, ինչ տըսնայ,

Ասկեար յիւջև չատրքիւր զարկած է.

Հալա իտեէն ասկեար կգեայ:

331. Դաւիթ կրեշիւր քեանց ասող էրկինք ասկեար կգեայ.

Դաւիթն էլ էսքամ ժամանակ իկի տուն,

Տարին լմացիր է, կուի չէրի.

Բեօուաց. — «Մա՛ Մարութայ բանձը Ասպարածին,

Խաչ պատրաստին «վար իմ աջ թիւին»: